Հաստատում եմ
Ախթալայի N 1 մ/դ
տնօրեն՝ ________________ (Լ. [illegible]իլյան)
(ստորագրություն)
13.09.2023թ.

Դասղեկի աշխատանքային պլան
2023-2024 ուստարի

Լոռու մարզի Ախթալայի N 1 միջն. դպրոց

11-րդ դասարան

Դասղեկ՝ Ա. Քալաշյան / Ա. Փարսադանյան

Կրթադաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

1. Հայեցի դաստիարակություն-Հայեցի դաստիարակության հոգևոր տարրը խիստ կարևոր է, այն պիտի անբաժան լինի դաստիարակչական ողջ գործընթացից։Հայ գրականության, Պատմության, ՀԵՊ առարկաների դասաժամերը պիտի ուղղված լինեն այդ նպատակին։

Դաստիարակության այս կարևոր տարրը պիտի խթանվի նաև դպրոցական,արտադասարանական միջոցառումների օգնությամբ։

2. Գեղագիտական դաստիարակություն-Հարկավոր է աշակերտներին ծանոթացնել ոչ միայն հայ, այլ նաև աշխարհահռչակ նկարիչների, բանաստեղծների, մեծանուն երաժիշտների աշխատանքներին, կենսագրությանը, թողած ժառանգությանը։

3. Ռազմահայրենասիրական դաստիարակություն-Պարբերաբար վարել զրույցներ հայրենասիրության թեմաներով, համագործակցել ռազմագիտության և պատմության ուսուցիչների հետ։

4. Ֆիզիկական դաստիարակություն-Կազմակերպել զրույցներ, ծանոթացնել օլիմպիական չեմպիոնների անցած ուղուն։

5. Աշխատանքային դաստիարակություն-Զրույցների շարք՝ նվիրված աշխատանքային դաստիարակությանը և մասնագիտական կողմնորոշմանը։

6. Բնապահպանական դաստիարակություն-Վարել զրույցներ, մասնակցել դպրոցական ծառատունկին։

7. Դպրոց-ընտանիք կապը-Յուրաքանչյուր կիսամյակում գումարել առնվազն երկու ծնողական ժողով։Ծնողներին տեղյակ պահել առաջադիմության հետ խնդիր

ունեցող աշակերտների մասին, նրանց օգնությամբ պարզել պատճառները։Հետևողական լինել հաճախումներին։

Դասի համարը	Դասի բովանդակությունը
1	Մասնագիտության ընտրություն 2023-2024 ուստարվա անելիքների քննարկում:
2	1 տարի ևս և կուղևորվենք կյանքի մի ուրիշ աշխարհ:
3	Մասնագիտություններ, որ հետաքրքրում են ինձ՝ անկախ Հայաստանի քաղաքացուս :
4	Ինչով է պայմանավորված մասնագիտության կարևորությունը:
5	Ինչ դառնալ կյանքում… Ամենամեծ պաշտոնը երկրի վրա:
6	Հռչակավոր Չապլինի նամակը՝ ուղղված աղջկան: Թեմային համահունչ այլ փաստերի ներկայացում:
7	Արդյո՞ք բարձրագույն հաստատություն ավարտելը միշտ է բավարար կրթված լինելու համար:
8	Հայրենիքիս հետ Ով չի սիրում իր երկիրը, ոչինչ սիրել չի կարող:
9	«Հայաստան» ասելիս աչքիս առաջ են գալիս…
10	Արտագաղթը այսօրվա ամենամեծ չարիքն է ազգիս համար: Եկեք խոստովանենք,որ օտարության մեջ արևը կարծես չի ջերմացնում:
11	Ընկան,որ ապրենք.. …Եվ նրանց փառքը երբեք չի մեռնում, Ովքեր հայրենիքի համար են ընկնում:
12	Ես պարտավոր եմ հայ հերոսներից ժառանգած հայրենիքը դարձնել հզոր ու անպարտելի:
13	Ի՞նչ է պետք հզոր հայրենիք ստեղծելու համար:
14	Ձե՛ռքդ տուր , միասին լուծենք բոլոր խնդիրները:
15	Միասնությունը տանում է դեպի ամուր ընտանիք ու հզոր հայրենիք:
16	Մարդկային փոխհարաբերություններ Եթե չես ուզում տառապել՝ մի' նախանձիր:
17	Կյանքի սանդուղքով վեր բարձրանալիս բարևի'ր բոլորին. Նրանց հանդիպելու ես նաև իջնելիս…
18	Ի՞նչն է խանգարում ինձ՝ քեզ հասկանալ:
19	Հպարտությու՞ն, թե՞ ամոթանք: Որոշ մոլորությունների մասին:
20	Խիղճ…Ամենաանաչառ և խիստ դատավորը բոլորիս համար:
21	Երբ մեղավոր ես,«ներողությունը» բարձրացնում է անձդ,ոչ թե նվաստացնում:
22	Ե'կ հասկանանք իրար: Ինքնատիրապետման անհրաժեշտությունը:
23	Երախտիքի խոսքդ ունես՝ ասա հենց հիմա,ի՞նչ իմանաս՝ գուցե վաղն արդեն ուշ լինի…
24	Ներելը ուժեղին և մեծ հոգուն է բնորոշ:
25	Ամենասարսափելին նույն սխալը կրկնելն է և համառորեն այն չգիտակցելը:
26	Ի՞նչ է սերն ու նվիրվածությունը:
27	Սիրված լինելը երջանկություն է, սիրելը՝է'լ ավելի մեծ երջանկություն է:

28	Առաքինությունը բոլորովին էլ կիրք չունենալը չէ…
29	Ի՞նչ կլինի, եթե բոլորը դադարեն սիրել:
30	Սիրում եմ,ուրեմն գոյություն ունեմ, գոյություն ունեմ՝ քանզի սիրում եմ:
31	Սերը վեհացնում է մարդուն:
32	Երբեմն ներողամտությունը խստությունից սաստիկ է ազդում:
33	Մի' ձգտիր շահի, այն անկեղծության թշնամին է:
34	Լա'վ իմացիր՝ փոքր աղբյուրից մարդ հանգիստ է ջուր խմում: